

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ, ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
12 հոկտեմբերի 2002 թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2002 թվականի N 1566-Ն

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ, ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԑՄԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող՝ ոստիկանության կողմից հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2002 թ. սեպտեմբերի 8
Երևան

*Հավելված
ՀՀ կառավարության 2002 թվականի
սեպտեմբերի 12-ի N 1566-Ն որոշման*

Ց Ա Ն Կ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Կատարված հանցագործությունների հետ կապված՝ համարակալված իրեր, փաստաթղթեր և արժեթղթեր, որոնք ենթակա են կենտրոնացված հաշվառման՝ քրեագիտական տեղեկատվությունների տվյալների զանգվածում
2. Հափշտակման հնաոճ առարկաներ և մշակութային արժեքներ
3. Հափշտակված, կորած և հայտնաբերված զենք ու ռազմամթերք
4. Հետախուզվող տրանսպորտային միջոցներ
(4-րդ կետը փոփ. 03.09.10 N 1110-Ն)
5. Տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների գրանցման վկայագրեր
6. Ոստիկանության կողմից տրվող ավտոտրանսպորտային միջոցներ վարելու ազգային և միջազգային վկայականներ
7. Տրանսպորտային միջոցների համարանիշեր
8. Տրանսպորտային միջոցների տարանցիկ համարանիշեր
9. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցնելու մասին կտրոններ
10. Վարչական իրավախախտման դեպքում վերցված վարորդական իրավունքի վկայականների փոխարեն տրվող ժամանակավոր թույլտվության կտրոններ
11. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրեր
12. Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագրեր
13. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունքի վկայականներ
14. Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ հայցողների վկայականներ
15. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց ճամփորդական փաստաթղթեր
16. Ոստիկանության կողմից տրվող լիցենզիաներ
17. Ոստիկանության կողմից տրվող թույլտվություններ
18. Պետական կնիքների արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց կողմից արտադրված պետական կնիքներ

19. Իրավաբանական և ֆիզիկական անձանց մոտ առկա զենքեր (բացառությամբ պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինությունում առկա զենքերի)

20. Պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից արտադրված պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքավորումներ

(Ցանկը խմբ. 25.12.08 N 1551-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան